

մը կ'երևնան . զոր օրինակ թէ ինչպէս կ'ըլլայ որ երբեմն գիտաւորները ինչուան որ մեզի մօտենան՝ մէկ հատ կը կարծենք , մէյմըն ալ կը տեսնենք որ յանկարծ մէկը երկուք եղեր է , կամ թէ երկու գիտաւոր իրարու սաստիկ մօտեցած կ'երևնան : Եւ բանս կրնայ ելեքտրական կամ բնալուծական բաժանմունքէ առաջ գալ . այսինքն որովհետեւ ըսինք թէ գիտաւորները շատ տեսակ նիւթերէ ձեւացած են , և իրարու հետ աղէկ զանգուած չեն , կրնայ ըլլալ որ մեզի անյայտ պատճառաւ մը կոտորուին , բաժնուին , ու այլեայլ աստղեր ձեւանան . աս բանս թէպէտ և ինծի այնչափ հաւանական չերևնար , բայց քանի որ նոր գտնուած մոլորակները՝ , ասուկները , շանթաքարը ու քարանձրեւ ըսուած երկնային մարմինները կը մտածեմ , այնչափ անհաւատալի բան մը չտեսնուիր » :

ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Գեորգի Դ յանկարծ յամէլը :

ՇՈՒԵՏԻ Կոթիա գաւառին մէջ Սոթալա անունով գետ մը կայ որ Կորքեօփինկ քաղաքին մօտ ծովը կը թափի : Զուտուարի 22^{ին} աս գետը յանկարծ սկսեր է քաշուիլ ու պակսիլ , այնպէս որ վեց եօթը ժամուան մէջ բոլորովին ցամքեր է , ու մարդիկ կը մէջը իջեր ժողովեր են ձեռքով՝ ցելին մէջ խրած ձկները : Երկրորդ օրը նորէն սկսեր է ջուրը վազել , ու կամաց կամաց առջինին պէս լեցուեր է : Եւ երեւոյթը նոյն գետին վրայ հան-

1 Աստղաբաշխներէն ոմանց կարծիքը աս է թէ վերջի գտնուած հինգ պոսիկ մոլորակները , որ են Դեմետրէ , Պալլաս , Յուստին կամ Հերա , Վեստա և Աստրէա , ատենով մեծ մոլորակ մըն են եղեր , ու ետքը բաժնուեր են :

դիպեր է նաև 1838^{ին} ամառը , բայց ան ատենը այսպէս սաստիկ չէ եղած ցամքիլը :

ՆՈՐԱՏԻՊ ԳՐԹԵՐ

ԱՌ ԶԵՌՆ

ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԼԵԶՈՒԻ

ՇԵՏ ատենէ 'ի վեր մեր ազգին ուսումնասէր վարժապետները այսպիսի գրքի մը ելեւուն փափաքելով կ'ըսէին . ո՛ր է թէ օր մը առաջ համառօտ բառարան մը տպուէր որ մէջը մեր գրաբառ լեզուին ամէն բառերը գտնուէին՝ կարճ բացատրութեամբ ռամկօրէն , ու հարկաւոր տեղերն ալ տաճկերէն մեկնուած : Ահա կը ծանուցանենք ուրախութեամբ որ իրենց աս փափաքն ալ կատարուեցաւ . վասն զի աս Առձեռն Բառարանին մէջ նոր հայկազնեան մեծ Բառարանին գրեթէ բոլոր բառերը ըլլալէն ետեւ , անկէ դուրս գտնուած հազարաւոր բառեր ալ աւելցուած են : Ոճով զուրցուածքներուն գլխաւորները համառօտ մեկնութեամբ մը գրուած , բառերուն այլ և այլ նշանակութիւնները թուահամարով զատուած , ու որչափ որ առ այժմ կարելի էր՝ ճշգուած են :

Յայտնի է թէ աս Բառարանը տողոց ձեռքը աւանահարկաւոր գործիք մըն է գրաբառ գրքերը հասկընալու . անկէ զատ՝ շարագրութիւն ընելու ատեն երբոր կը տարակուսին թէ աս կամ ան բառը մեր նախնի մատենագրաց մէջ գործածուած է թէ չէ , կամ թէ ինչ նշանակութեամբ գործածուած է , ասոր մէջ նայելով կը ստուգեն : Բայց աշխարհաբառէ գրաբառ Բառարան մըն ալ հարկաւոր է որ տղաք իրենց չգիտցած բառերը անոր մէջ փնտռեն . և ան ալ ասոր երկրորդ հատորը կ'ըլլայ անշուշտ քիչ ատենէն :

ՀԱՆԵԼՈՒԿ

Է պատուհաս ու գին քրտանց
Փափաքելի ամէն մարդկանց .
Ըզնա տըղայք խընդրեն 'ի հարց ,
Ըզնա խընդրեն հարքն 'ի բարձանց :

ԱՊՐԻԼԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԻՐ ՄՈՄԵՂԿՆ :